Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԵՑ1 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան - 1 ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025 -31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2025-31.03.2025թթ. |
| Ներկայացման օր | 07.04.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական օգնության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 80 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 2 դեպքի վարում (վերափաստագրում), 4 շահառուի համար ամենամսյա ընտանիքի անապահովության միավորի տեղեկանքի ստացում ՄԱԾ-ից, 2 շահառուի ուղեկցում փաստաթղթերի հանձնման նպատակով, 33 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- **Ազատ ժամանցի կազմակերպման** շրջանակներում կենտրոններում գործել են տարբեր հետաքրքրությունների խմբակներ, կազմակերպվել միջոցառումներ: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոններում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 11 խմբակ, որոնց մասնակցել են 80 շահառու:
    - Գրական
    - Երգի
    - Կինեզալոգիայի
    - Հմուտ ձեռքերի
    - Կարի
    - Նկարչական
    - Առողջ ապրելակերպ
    - Հոգևոր զրույցներ
    - Աշուղական երգի
    - Ազգային երգի ու պարի
    - Անգլերենի ուսուցման

Կենտրոններում կազմակերպվել է թվով 12 միջոցառում, մեկ էքսկուրսիա: Շահառուները մասնակցել տարբեր համերգասրահներում կազմակերպված 32 համերգի:
Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված միջոցառումներին մասնակցել են 80 շահառու:
Իրականացված միջոցառումներն են՝

1. Սուրբ Ծնունդ՝ Սուրբ Ծննդյան խորհրդը, Ջրօրհնեքի կարգը,

2. Հանդիպում Նոր Նորքի վարչական ղեկավար Տիգրան Տեր-Մարգարյանի հետ, նա պատասխանեց ավագ սերնդին հուզող հարցերին, կիսվեց մտահոգություններով: Միջոցառման ավարտին վարչական ղեկավարի կողմից տարեցների մատուցվեց անակնալ, բաժանվեցին տոնական փաթեթներ:
3. Անանիա Շիրակացու անվան ճեմարանի սաների հերթական այցը Նոր Նորքի ցերեկային կենտրոն. ավագ սերնդի և ճեմարանի սաների կողմից հնչեցին երգեր, բանաստեղծություններ, միասին պարեցին և ուրախացան:
4. Հին Նոր տարվան նվիրված միջոցառում: Անանիա Շիրակացու անվան ճեմարանի սաների այցը «Նռնենի» ցերեկային կենտրոն, ավագ սերնդի ներկայացուցիչները ճեմարանի սաների հետ միասին երգեցին, պարեցին: Սաները նաև գեղեցիկ անակնկալներ էին պատրաստել Ցերեկային կենտրոնի շահառուների, ինչպես նաև «Նռնենի» սոցիալական տանը բնակվող տարեց բնակիչների համար:
5. Տեառնընդառաջի նշում, վառվեց տոնական խարույկը, երգուպարով նշվեց տոնը, բաժանվեցին տոնական տարոսիկներ ու տոնի բնորոշ քաղցրավենիք:
6. Թումանյանի ծննդյան օրվա նշում Նոր Նորքի ցերեկային կենտրոնում, ընթերցվեցին նրա բանաստեղծությունները, ինչպես նաև նշվեց գրքի տոնը, ավագ սերնդի ներկայացուցիչները իրար նվիրեցին գրքեր՝ սեփական գրադարանից:
7. Հ. Թումանյանի ծննդյան օրվա և «Գրքի տոնին» նվիրված միջոցառում «Նռնենի» ցերեկային կենտրոնում: Կենտրոնն հյուրընկալել էր նաև Շենգավիթ ցերեկային կենտրոնի շահառուներին՝ միասին տոնելու և իրենց ձեռքի աշխատանքները ներկայացնելու միմյանց:
8. Կանանց միջազգային օրվա նշում Երևանի բոլոր ցերեկային կենտրոններում, որի ժամանակ հնչեցին բանաստեղծություններ ու երգեր ավագ սերնդի կողմից: Տոնական միջոցառման ավարտին ավագ սերնդին մատուցվեց անակնկալ նվերներ տոնի առթիվ:
9. Հանդիպում ՄԱԿՓԳՀ-ի ներկայացուցիչների հետ:
10. Շահառուների ծննդյան օրերի նշում:
11. ՀՀ բանակի կազմավորման օրվան նվիրված միջոցառում:
12. Գարնանամուտին նվիրված միջոցառում:
13. Էքսկուրսիա Կոտայքի մարզ. «Լևոն Առաքելյանի» Լևոնի Աստվածային գետնափոր թանգարան, Եկեղեցական համալիր «Պողոս-Պետրոս», Գետարգել գյուղի «Զագավանք» և «Գետարգել» եկեղեցիներ:

Մասնակցություն համերգներին

1. Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում. Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Հայաստանի պետական կամերային նվագախումբ, Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբ, Թ. Ալթունյանի երգի պարի համույթ, «Բարեկամություն» պարի համույթ, Արա Պապյանի մենահամերգ:
2. Կամերայի երաժշտության տանը. Հայաստանի պետական կամերային նվագախումբ, Հայաստանի պետական կամերային երգչախումբ, Երևանի պետական կամերային երգչախումբ, «Հովեր» երգչախումբ, «Տաղարան» հնագույն երաժշտության համույթ, Հայկ Մելիքյանի, Տիգրան Մանսուրյան «Հայրեններ» մենահամերգներ, երգեհոնային երաժշտության շաբաթօրյա համերգներ:
3. Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում Հայաստանի Պարի պետական անսամբլի 67-րդ համերգաշրջանի բացման համերգ:

- **Աշխատանքային/արտթերապիայի կազմակերպման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է 41 խմբային հանդիպում (մասնակիցների թիվ՝ 72): Հոգեբանի կողմից անհատական շարունակական խորհրդատվություն է իրականացվել 4 շահառուի հետ՝ ուղղված անձնային աճին, կենսական ակտիվ ինքնորոշման խթանմանը, հոգեկան ոլորտների ակտիվացմանը, գիտելիքների ձեռքբերմանը: Հոգեբանի կողմից խմբային հանդիպումներում օգտագործվել են տարբեր տեխնիկաներ ուղղված անցած կենսափորձի վերարժեւորմանը, արժեքային համակարգի եւ խմբային արժեքների դուրսբերմանը, խմբի

սոցիալ-հոգեբանական մթնոլորտի բարելավմանն ու միախմբանը: Խմբային աշխատանքներում իրականացվել է նաև երաժշտաթերապիա, ուշադրության, հիշողության զարգացմանը նպաստող խաղեր, վերբալ եւ պատկերավոր մտածողությանը, ստեղծագործական երեւակայության հետազոտմանը եւ զարգացմանն ուղղված տեխնիկաներ, ինչպես նաև ինքնաճանաչման ուղղված պրոյեկտիվ մեթոդիկաներ:

- **Սննդի կազմակերպման** շրջանակներում կենտրոններում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- **Բաղնիքի ծառայության տրամադրում** շրջանակներում թվով 3 շահառու օգտվել է բաղնիքի ծառայությունից, 2 շահառու օգտվել է լվացքի ծառայությունից:
- **Այլ ծառայությունների տրամադրման** շրջանակներում ցերեկային կենտրոնում տրամադրվել են բուժքույրական ծառայություններ. իրականացվել է թվով 66 շահառուի զարկերակային ճնշման չափում, 62 օքսիմետրիա, 2 շահառուի համար իրականացվել է տունայց, 2 շահառու համար դեղորայքի ստացում, 6 շահառուի գլյուկոմետրիա, 2 շահառուի ներարկում, 3 շահառուի համար կատարվել է վերքի մշակում և վիրակապի փոփոխություն, 1 շահառուի համար կատարվել է դեղերի գնում դեղատնից: Բուժքրոջ կողմից իրականացվել է հիգիենայի կանոնների վերահսկում, սննդի ստուգում և շաբաթական մեկօրյա գրաֆիկով բժշկական թեմաներով քննարկումների կազմակերպում՝ «Գրիպը, բարդությունները եւ բուժումը», «Երակների վարիկոզ լայնացում եւ կանխարգելում», «Արթրոզ, արտրիտներ, բուժում», «Ենթաստամոքսային գեղձ, ֆունկցիաներ, բուժում», «Վահանաձեւ գեղձ», «Վիտամինային անբարարություն»:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը

- Հանդիպում Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար հետ. տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.lu/sfwufb
- Տիառնընդառաջ. տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/aifahc, https://surl.li/qxvfoi
- Կարի խմբակ. տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/yavdyf
- Հմուտ ձեռքեր տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/vpiafd
- Հին Նոր տարի. տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/vgciku
- ՀՀ բանակի տոն. տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surli.cc/povjfl
- Հ. Թումանյանի ծննդյան օր. տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/momnvg
- Գարանանմուտ. տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/ztdjgs
- Կանանց միջազգային օր. տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/ehhmjy, https://surl.li/gshoic
- Էքսկուրսիա. տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/oroqpf

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,

- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- ✓ Սոցիալական աշխատողների ամեն ամվա մասնակցությունը վարչական շրջանների ՄՍԾ խորհրդատվական նիստերին:
- ✓ Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից մասնակցություն Առողջապահական քաղաքականության և համակարգերի հետազոտություն (ԱՔՀՀ) կողմից կազմակերպված թրեյնիգներին.
  - Թեմա «Առողջապահական համակարգերի գիտելիքների յուրացման ներածություն», Հունվարի 17,18 2025թ: Դասախոս՝ Դոկտոր Սառա Մանթվիլ:
  - Թեմա «Որոշումների կայացման համար քաղաքական ամփոփագրերի մշակում» Դասախոս Դոկտոր Նիկոլա Դիվանի մարտի 14, 15 - 2025թ:
- ✓ Սոցիական դեպքի վարման, տնային կամ գտնվելոու վայր այցելություն կատարելու մեթոդական ուղեցույցները հաստատելու մասին նախագծի առցանց քննարկում ԱՍՀՆ-ի կողմից կազմակերպված: Մասնակցություն Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից:

- ✓ Տարեցների պաշտպանության ցանցի հանդիպումների շարունական մասնակցություն՝ Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից:

- ✓ Աշխատանքի եւ սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ, վերապատրաստման դասընթաց, թեմա՝ «Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունները եւ տարեցների հետ տարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքի առաձնահատկությունները», մասնակցություն Նոր Նորք եւ Ավան սոցիալական աշխատող՝ Մարգո Աբաղյան, ստացել է հավաստագիր

- ✓ ՄԱԲՀ-ի կողմից կազմակերպված հանդիպում թեմաներ՝ «Իրականացնող գործընկեր դառնալու ընթացակարգեր» եւ «Ֆինանսական կառավարման և մոնիտորինգ»: Մասնակցություն Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից:

- ✓ Կազմակերպության էթիկանան նորմեր եւ վարքականոններ, Անվտանգության ապահովման քաղաքականությունություն եւ ազդարարման ընթացակարգ, մասնակցել են Նոր Նորք, Ավան, Քանաքեռ-Զեյթուն, Արաբկիր և կենտրոն համայնքները սպասարկող բոլոր աշխատակիցները:

- ✓ «Նոնենի» Ցերեկային կենտրոնում հոգեբան՝ Անի Կարակյանի նախաձեռնությամբ աշխատակիցների համար կազմակերպվել է թրեյնինգ՝ «Հոգետրավմայի ծագման դրսևորման առանձնահատկությունները, հուզական, մտածական և վարքային ոլորտների վրա տրավմայի ազդեցության հետևանքները և նեյրոկենսաբանական որոշ բնութագրիչները» թեմայով: Նաև անդրադարձ է կատարվել հոգետրավմայի ազդեցությանը միջանձնային հարաբերությունների վրա, քննարկվել են ապաքինմանը նպաստող գործոնները:
- ✓ «Ներառական քաղաքականության կենտրոն» ՀԿ՝ Հայաստանում հաշմանդամության գնահատման մոդելի փոփոխությունը ուսումնասիրելու նպատակով, ֆոկուս խմբի կազմակերպում

«Հայաստանի թվային ֆունկցիոնալության գնահատում» թեմայով: Առցանց մասնակցություն Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 80/80 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 67 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 6 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 4 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 6 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 72 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 80 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 80 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 72 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 80 |
| 5.1 | Նշել խմբակի անվանումը՝ «Կինեզալոգիա» | 56 |
| 5. 2 | Նշել խմբակի անվանումը՝ «Գրական» | 63 |
| 5. 3 | Նշել խմբակի անվանումը՝ «Երգ» | 35 |
| 5.4 | Նշել խմբակի անվանումը՝ «Հոգևոր զրույցներ» | 55 |
| 5.5 | Նշել խմբակի անվանումը՝ «Հմուտ ձեռքեր» | 55 |
| 5.6 | Նշել խմբակի անվանումը՝ «Կար» | 15 |
| 5.7 | Նշել խմբակի անվանումը՝ «Առողջ ապրելակերպ» | 20 |
| 5.8 | Նշել խմբակի անվանումը՝ «Աշուղական երգի» | 18 |
| 5.9 | Նշել խմբակի անվանումը՝ «Նկարչական խմբակ» | 18 |
| 5.10 | Նշել խմբակի անվանումը՝ «Ազգային երգ ու պար» | 15 |
| 5. 11 | Նշել խմբակի անվանումը՝ «Անգլերենի ուսուցում» | 14 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 80 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 35 |
| 7. | Այլ ծառայություն Բաղնիքից շարունակաբար օգտվել են<br>Լվացքի կազմակերպում)<br>Բուժքույրական ծառայություններ | 3<br>1<br>66 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «07»04.2025թ.

(ստորագրություն, անուն,ազգանուն)